

18

ՄԱՐՏԻ
2021

Luys Lnyju®



ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ.
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
1. ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	1
2. ԿԱՅՈՒՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	3
2.1. Կայուն խորհրդարանական մեծամասնության սահմանադրական պահանջը .	3
2.2. Նախատեսվող փոփոխությունները	4
3. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՅԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ	8

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի «Իմ քայլը» իշխող խմբակցությունը 2021թ. մարտի 4-ին հրավիրված՝ խմբակցության նիստում հանդես է եկել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (այսուհետ նաև՝ Նախագծերի փաթեթ)¹ օրենսդրական նախաձեռնությամբ:

Ազգային ժողովի նախագահը 2021թ. մարտի 4-ին դիմել է «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողով (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով) Նախագծերի փաթեթի վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով²: 2021թ. մարտի 19-ից 20-ը նախատեսվում է անցկացնել Վենետիկի հանձնաժողովի 126-րդ լիազումար նիստը: Նշված նիստի օրակարգում նախատեսված է նաև Նախագծերի փաթեթի նախնական բանավոր քննարկում, ինչպես նաև նախատեսվում է Նախագծերի փաթեթի վերաբերյալ զեկուցողներին լիազորել, որպեսզի վերջիններս խորհրդատվական կարծիքը կարողանան ներկայացնել հրատապ կարգով³:

Ստորև անդրադարձ է կատարվում Նախագծերի փաթեթով առաջարկվող առանցքային փոփոխություններին, մասնավորապես՝ համամասնական ընտրակարգի (մաս 1) և կայուն խորհրդարանական մեծամասնության (մաս 2) վերաբերյալ փոփոխություններին, ինչպես նաև ներկայացվում են նախատեսվող այլ կարգավորումներ (մաս 3):

1. ՆԵՐԿԱՅԻՍ ՀԱՄԱՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով⁴ (այսուհետ նաև՝ Ընտրական օրենսգիրք) Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախատեսվում է համամասնական բազմամանդատ ընտրակարգ՝ տարածքային ոչ պարտադիր քվեարկությամբ: Համաձայն Ընտրական օրենսգրքի՝ «Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով, Հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից՝ կուսակցությունների

¹ Նախագծերի փաթեթը դրվել է շրջանառության մեջ և հասանելի է Ազգային ժողովի պաշտոնական կայքի «նախագծեր» բաժնի «դեռևս չընդգրկվածներ» ենթաբաժնում:

² <https://www.venice.coe.int/webforms/events/?id=3114>:

³ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PL-OJ\(2021\)001ann-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PL-OJ(2021)001ann-e), կետ 20:

⁴ Ընդունվել է Ազգային ժողովի կողմից 25.05.2016 թ., ՀՀՊՏ 2016.05.30/42(1222), ՀՕ-54-Ն, հոդ. 456:

համապետական և տարածքային ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորի թեկնածուների թվից» (հոդված 77):

Հայաստանի Հանրապետության ողջ տարածքն ընդգրկում է 1 բազմամանդատ ընտրատարածք՝ 13 ընտրական տարածքով (4-ը՝ Երևանում, 9-ը՝ մարզերում): Պատգամավորներն առաջադրվում են համապետական և տարածքային ընտրական ցուցակներով (Ընտրական օրենսգիրք, հոդված 83):

- Այլ կերպ ասած, ներկայիս համամասնական ընտրակարգը համադրված է *ռեյտինգային համակարգի* հետ, ինչը հնարավորություն է տալիս ընտրողին՝ կուսակցության օգտին քվեարկելու հետ մեկտեղ, իր ձայնը տալ ընտրական ցուցակում ընդգրկված իր նախընտրած թեկնածուին:
- Կուսակցական կարծի ցուցակները կուսակցությունների ղեկավարներին փաստացիորեն վերապահում են իրենց ցուցակի պատգամավորների ընտրության հարցը, իսկ ընտրողներին հնարավորություն չեն տալիս անմիջական ազդեցություն ունենալ իրենց նախընտրած թեկնածուների ընտրության վրա:
- Ռեյտինգային համակարգը շտկում է «փակ» ցուցակներով համամասնական համակարգերի այս թերությունը, որը հնարավորություն չի տալիս ընտրողին որևէ ձևով ազդեցություն ունենալու ընտրական ցուցակում ընդգրկված իրենց նախընտրած թեկնածուների ընտրության վրա: Դրանով իսկ, ռեյտինգային համակարգը թույլ է տալիս առավելագույնս հաշվի առնել ընտրողների նախապատվությունը կոնկրետ թեկնածուի օգտին, այլ ոչ թե այդ որոշումը թողնում է միայն կուսակցության ղեկավար մարմնի հայեցողությանը:
- Գործող համամասնական ընտրակարգը մի կողմից հնարավորություն է տալիս ընտրողին՝ իր քաղաքական կողմնորոշման շրջանակներում ուղղակիորեն ընտրելու իր նախընտրած թեկնածուին, իսկ մյուս կողմից հնարավորություն է տալիս ապահովելու ընտրողի և ընտրվողի միջև անմիջական կապը: Դրանով մեղմվում է դասական համամասնական ընտրակարգի կիրառման ժամանակ առաջացող անջրպետը՝ ընտրողների և ընտրվողների միջև: Սա հատկապես արդիական է մարզերի պարագայում: Ավելին, առաջ է գալիս համամասնական ցուցակում մայրաքաղաքային էլիտայի ոչ հավասարակշռված ներկայացվածության ռիսկ:
- Գործող ընտրական համակարգը մեղմում է ներկուսակցական մրցակցության բացասական երևույթները, որոնք, որպես կանոն, հատուկ են ռեյտինգային քվեարկություն սահմանող համամասնական ընտրակարգերին:
- Առանց ռեյտինգային համակարգի համամասնական ընտրակարգը առավել ընդգծում է համամասնական ընտրակարգին բնորոշ այն թերությունը, որ

թեկնածուն բավական մեծ կախվածություն ունի այն կուսակցությունից, որի ցուցակով ընտրվել է:

Ընտրական օրենսգրքի նախագծով առաջարկվող փոփոխությունը

Ընտրական օրենսգրքի նախագիծը⁵ վերացնում է «*տարածքային ընտրական ցուցակները*»՝ նախատեսելով միայն Հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածք:

Դրանով իսկ վերացվում են համամասնական ընտրական համակարգի թերությունների այն բոլոր շտկումները, որոնք թվարկվեցին վերևում:

**2. ԿԱՅՈՒՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ.
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1. Կայուն խորհրդարանական մեծամասնության սահմանադրական պահանջը

Խորհրդարանական կառավարման ձևում կառավարության ճակատագիրը կախված է խորհրդարանից, և կառավարությունը կարող է արդյունավետ գործել, եթե հենվում է համեմատաբար կայուն քաղաքական ուժերի աջակցության վրա: *Եթե խորհրդարանում կայուն մեծամասնություն չկա, կառավարությունները կարող են հաճախ փոխվել:*

2015թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ նախատեսված խորհրդարանական կառավարման ձևի հիմքում դրված է ընտրությունների արդյունքով կառավարության ավտոմատ ձևավորման սկզբունքային մոտեցումը, որի ապահովմանն է ծառայում կայուն մեծամասնության սկզբունքը: Այս տրամաբանությամբ են կառուցված նաև սահմանադրական մյուս նորմերը, մասնավորապես՝ Հանրապետության նախագահի արարողակարգային դերակատարումը կառավարության ձևավորման հարցում, ինչպես նաև վարչապետի ընտրության և նշանակման սահմանադրական կարգավորումները (հոդված 149):

Եթե ընտրություններում ոչ մի կուսակցություն չի ստանում բացարձակ մեծամասնություն, ապա կռալիցիոն կառավարություն ձևավորելու համար անհրաժեշտ է լինում կազմել հետընտրական դաշինքներ, բայց այդ դաշինքները կազմվում են, ըստ էության, ընտրողների «թիկունքում», այլ ոչ թե ընտրողի կամքով: Եթե սա նորմալ գործելակերպ է բազմաթիվ խորհրդարանական

⁵ Ընտրական օրենսգրքի նախագիծ, 59-րդ և 62-րդ հոդվածներ:

երկրներում, ապա, հաշվի առնելով Հայաստանի կուսակցական համակարգի առանձնահատկությունները, որտեղ կուսակցություններն առավելապես անձնակենտրոն են, և թույլ է կուսակցական կարգապահությունը խորհրդարանական խմբակցություններում, կայուն մեծամասնության ապահովման հիմնախնդիրն առավել արդիական է⁶:

Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված՝ Ազգային ժողովի ընտրակարգը լայն առումով հետապնդում է երկու նպատակ՝ ձևավորել ժողովրդի ներկայացուցչական մարմինն առանց զգալի անհամամասնությունների (ինչը մեծամասնական համակարգի ակնառու թերությունը և համամասնական համակարգի ակնառու առավելությունն է) և, միաժամանակ, ապահովել կառավարման ունակ խորհրդարանական մեծամասնություն (ինչը մեծամասնական համակարգի առավելությունն է և համամասնական համակարգի թերությունը):

Կայուն խորհրդարանական մեծամասնության սկզբունքի ուժով ընտրողը հնարավորություն է ստանում ուղղակիորեն ազդելու երկրի քաղաքական ուղեգծի ձևավորման վրա, քանի որ կարողանում է որոշել, թե որ քաղաքական ուժերը պետք է ձևավորեն կառավարությունը: Կառավարությունը փաստացիորեն ստանում է ուղղակի ժողովրդավարական լեգիտիմություն:

Կայուն խորհրդարանական մեծամասնության սկզբունքը նպաստում է երկբևեռ կուսակցական համակարգի ձևավորմանը, քանի որ խթանում է, որ կուսակցությունները հաջողության հասնելու համար միավորվեն կամ դաշինքներ կազմեն միմյանց քաղաքական և գաղափարախոսական առումով մոտ ուժերի հետ: Դա վերաբերում է ինչպես ընտրության առաջին, այնպես էլ երկրորդ փուլերին⁷:

2.2. Նախատեսվող փոփոխությունները

Նախագծերի փաթեթով առաջարկվող մի շարք կարգավորումների արդյունքում, ըստ էության, վերացվում է կայուն մեծամասնության սահմանադրական պահանջը, ինչը խնդրահարույց է սահմանադրականության տեսանկյունից:

1. Փաստացիորեն վերացվում է կայուն խորհրդարանական մեծամասնություն երաշխավորող մեծամասնության լրացուցիչ մանդատների կառուցակարգը:

⁶ Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, էջ 109:

⁷ Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, էջ 111:

Ընտրական օրենսգրքի նախագծի 75-րդ հոդվածով⁸ նախատեսվում է, որ «1. Եթե որևէ կուսակցություն սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերի հերթական կիրառման արդյունքում ստացել է սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-9-րդ մասերով բաշխված մանդատների ընդհանուր թվի 50 տոկոսը, ապա այդ կուսակցությունն ստանում է այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որի արդյունքում այդ կուսակցության մանդատների քանակը տոկոսային արտահայտությամբ լինի ոչ պակաս, քան 52 տոկոս»:

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունը սահմանում է, որ «Ընտրական օրենսգրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը»:

Ըստ այդմ, Ընտրական օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է. «Եթե որևէ կուսակցություն (դաշինք)... ստացել է բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն 54 %-ից պակաս, ապա այդ կուսակցությունն ստանում է այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որ արդյունքում այդ կուսակցության մանդատների քանակը տոկոսային արտահայտությամբ լինի ոչ պակաս, քան 54 %-ը (հոդված 96, մաս 1):

Ընտրական օրենսգրքի նախագիծը նախատեսում է անիրականալի պայմաններ լրացուցիչ մանդատների բաշխման համար, քանի որ դա նախատեսվում է միայն այն պարագայում, երբ որևէ կուսակցություն ստացել է մանդատների ընդհանուր թվի 50 տոկոսը:

- Նախ, գործնականում գրեթե անհնարին է պատկերացնել մի իրավիճակ, երբ որևէ կուսակցություն ստանա ճիշտ 50 տոկոս մանդատ:
- Կարգավորումը վերածելով թվերի՝ ստացվում է հետևյալ պատկերը. 105 մանդատի (101 մանդատ + 4 ազգային փոքրամասնությունների մանդատ) 50 %-ը կլինի 52.5 մանդատ, որը անիրատեսական է, քանի որ կես մանդատ հնարավոր չէ ունենալ:
- 105 մանդատի 52%-ը կլինի 54,6 մանդատ, որից ստացվում է, որ կայուն մեծամասնությունը ապահովվում է ընդամենը երկու-երեք լրացուցիչ մանդատի հաշվին: Մինչդեռ Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասության պահանջն է, որ Ընտրական օրենսգրքը երաշխավորի կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը, որը որևէ պարագայում իրագործված չի համարվել մեկ լրացուցիչ մանդատի պարագայում: Համեմատության համար՝

⁸ Ընտրական օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մաս:

Ընտրական օրենսգրքով նախատեսված է 54 % (Ընտրական օրենսգիրք, հոդված 96, մաս 1):

2. Ընտրական օրենսգրքի նախագծով ամբողջությամբ վերացվել են կոալիցիա կազմելու սահմանափակումները, որոնք վերջնարդյունքում հանգեցնելու են խորհրդարանական կայունության խաթարման:

Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ նախադասությունը սահմանադրական պահանջ է նախատեսում՝ Ընտրական օրենսգրքով սահմանել «Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը»: Սահմանադրական այս պահանջը միտված է կանխելու փոքր կուսակցությունների մասնակցությամբ կոալիցիաների ձևավորմանը, ինչը հետագայում կոալիցիայի պառակտման պարագայում կարող է հանգեցնել խորհրդարանի ապակայունացմանը:

Ըստ այդմ, Ընտրական օրենսգրքը սահմանափակում է քաղաքական կոալիցիայի կազմումը ընտրական արգելապատնեշները հաղթահարած **առավելագույնը երեք կուսակցություններով** (կուսակցությունների դաշինքներով) (Ընտրական օրենսգիրք, հոդված 97, մաս 1):

Մինչդեռ Ընտրական օրենսգրքի նախագծի 76-րդ հոդվածով կոալիցիա կազմելու սահմանափակումը հանված է և կոալիցիա կազմելու իրավունքը տրված է բաշխված մանդատների ընդհանուր թվի հարաբերական մեծամասնությունն ստացած կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին)՝ մանդատների բաշխմանը մասնակցած մյուս կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ, եթե նրանց օգտին տրված ձայների գումարը բավարար է բաշխված մանդատների ընդհանուր թվի 52 տոկոսը ստանալու համար և նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ: Իսկ եթե նշված կոալիցիան չի ձևավորվում, ապա կոալիցիա կազմելու իրավունք է ստանում մանդատների բաշխմանը մասնակցած ցանկացած կուսակցություն (կուսակցությունների դաշինք)՝ մանդատների բաշխմանը մասնակցած մյուս կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) հետ, եթե նրանց օգտին տրված ձայների գումարը բավարար է բաշխված մանդատների ընդհանուր թվի 52 տոկոսը ստանալու համար, և նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ:

Այսպիսով, Ընտրական օրենսգրքի նախագիծը որևէ սահմանափակում չի նախատեսում քաղաքական կոալիցիա ձևավորելու համար, մինչդեռ դա

սահմանադրական պահանջ է⁹: Կոալիցիայի անդամների թիվը չսահմանափակելը հանգեցնում է նաև կայուն մեծամասնության սահմանադրական պահանջի խախտմանը¹⁰:

Ավելին, Ընտրական օրենսգրքի նախագծով փաստորեն կոալիցիա կազմելու նախապատվությունը տրվում է առաջին տեղը զբաղեցրած կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին), որը Ազգային ժողովի պատգամավորների մանդատների նախնական բաշխումից հետո՝ 14 օրվա ընթացքում, կարող է քաղաքական կոալիցիա կազմել մանդատների բաշխմանը մասնակցած մյուս կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ: Եթե 14 օրվա ընթացքում առաջին տեղը զբաղեցրած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) չի կարողանում կազմել կոալիցիա, ապա մնացած կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) միայն այդ դեպքում է հնարավորություն տրվում 7 օրվա ընթացքում կազմել կոալիցիա: Անհրաժեշտ է ընդգծել, որ Ընտրական օրենսգրքը ի սկզբանե կոալիցիա կազմելու հնարավորություն է տալիս ընտրական արգելապատնեշները հաղթահարած բոլոր կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) (Ընտրական օրենսգրք, հոդված 97, մաս 1):

3. Ազգային ժողովի ընտրական արգելապատնեշը

Ընտրական օրենսգրքի նախագծով փոփոխություններ են նախատեսվում նաև Ազգային ժողովի ընտրական արգելապատնեշի տոկոսային շեմերում (Ընտրական օրենսգրքի նախագիծ, հոդված 74, մաս 2):

- Կուսակցությունների դեպքում սահմանված է 4 տոկոս⁹՝ գործող 5 տոկոսի փոխարեն¹¹,
- երկու կուսակցություններից կազմված կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 8 տոկոս,
- երեք կուսակցություններից կազմված դաշինքի դեպքում՝ 9 տոկոս,
- 4 և ավելի կուսակցություններից կազմված դաշինքի դեպքում՝ 10 տոկոս:

Կուսակցությունների համար ընտրական արգելապատնեշի տոկոսային շեմի իջեցումը (5 տոկոսից 4 տոկոս) վտանգավոր է նրանով, որ նման պայմաններում կարող է ձևավորվել բավական մեծ թվով փոքր կուսակցություններից կազմված խորհրդարան: Հաշվի առնելով, որ Ընտրական օրենսգրքի նախագծով վերացվում

⁹ Սահմանադրություն, 89-րդ հոդված, 3-րդ մաս, 4-րդ նախադասություն:
¹⁰ Սահմանադրություն, 89-րդ հոդված, 3-րդ մաս, 2-րդ նախադասություն:
¹¹ Գործող Ընտրական օրենսգրքով կուսակցությունների դաշինքի համար անցողիկ շեմը նախատեսված է 7 տոկոս (հոդված 95, մաս 4):

Են նաև կոալիցիա ձևավորելու սահմանափակումները, արդյունքում, այդ թվում՝ նաև այդ փոքր կուսակցությունների մասնակցությամբ, կարող է ձևավորվել քաղաքական կոալիցիա: Մեծ է հավանականությունը, որ հետագայում մեծ թվով կուսակցություններից ձևավորված կոալիցիան կարող է պառակտվել, ինչը խաթարում է խորհրդարանական կայուն մեծամասնության գաղափարը:

4. Փոքրամասնության մրցանակի վերացումը

Ընտրական օրենսգիրքը թույլ չի տալիս այնպիսի իրավիճակ, երբ խորհրդարանական փոքրամասնությունը ունի 1/3-ից պակաս ներկայացվածություն: Ընտրական օրենսգրքի նախագիծը վերացնում է փոքրամասնության համար նախատեսված լրացուցիչ մանդատների պահանջը և թույլ է տալիս, որ, օրինակ, 80 տոկոս ստացած քաղաքական կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) ունենա հենց այդքան ձայներին համապատասխանող մանդատներ: Ընտրական օրենսգրքի նախագծի 74-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը վերաբերում է միայն այն դեպքին, երբ հաղթողը չի ստացել 2/3 վավերական ձայներ, բայց այդ կուսակցությանը հասնում է 2/3-ից ավելի մանդատ (արգելապատնեշները փոքր կուսակցությունների կողմից չհաղթահարելու պատճառով): Միայն այս դեպքում է, որ փոքրամասնության մանդատների ընդհանուր թիվը պետք է լինի 1/3:

3. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՅԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փոխվել է ընտրական գրավի չափը: Կուսակցությունների դեպքում սահմանվել է նվազագույն աշխատավարձի 7 500-պատիկի չափով, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ նվազագույն աշխատավարձի 15 000-պատիկի չափով¹² (Ընտրական օրենսգրքի նախագիծ, հոդված 63):
2. Նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզարշավի հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու նպատակով դահլիճների, տարածքների և ընտրական շտաբների կոմունալ ծախսերը, ինչպես նաև նախընտրական քարոզարշավի նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վառելիքի հետ կապված ծախսերը կարող են չներառվել նախընտրական հիմնադրամում (Ընտրական օրենսգրքի նախագիծ, հոդված 17, մաս 1):
3. Սահմանվել է դրույթ, որի համաձայն՝ նախընտրական հիմնադրամից կատարվող կանխիկ վճարումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել

¹² Գործող ընտրական օրենսգրքով և՛ կուսակցությունների, և՛ կուսակցությունների դաշինքի համար ընտրական գրավի չափը նախատեսված է նվազագույն աշխատավարձի 10 000-պատիկի չափով (հոդված 84, մաս 2, կետ 6):

նվազագույն աշխատավարձի 400-պատիկը (Ընտրական օրենսգրքի նախագիծ, հոդված 17, մաս 2):

4. Նախընտրական քարոզարշավի ընթացքում նախատեսվել է կամավոր աշխատանք հասկացությունը, որը ենթակա չէ հայտարարագրման: Կամավոր աշխատանք է համարվում ֆիզիկական անձանց կողմից, ներառյալ՝ վերջիններիս կողմից անձնական գույքի օգտագործմամբ (բացառությամբ տրանսպորտային միջոցների և անշարժ գույքի) անհատույց կատարված աշխատանքը կամ ծառայությունների մատուցումը¹³: Կամավոր աշխատանքը ենթակա է հաշվառման, եթե կամավոր աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը: Կամավոր աշխատանքը հաշվառվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով (Ընտրական օրենսգրքի նախագիծ, հոդված 18, մաս 4):
5. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը նախընտրական հիմնադրամներ կատարվող մուտքերի, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողության նպատակով տրվել է լիազորություն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների՝ իրենց նախընտրական հիմնադրամներ կադրած մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման համար անհրաժեշտ առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ (Ընտրական օրենսգրքի նախագիծ, հոդված 19, մաս 3):
 - Բանկային գաղտնիքի ռեժիմի թուլացման ներկայիս միտումը պետք է դիտարկել Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքի համատեքստում: Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքից ածանցվող՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների անձեռնմխելիության նկատմամբ միջամտության թույլատրելիությունը և գաղտնիության ռեժիմի թուլացման սահմանադրականությունը պետք է լրջորեն քննարկվեն Սահմանադրությամբ նախատեսված հիմնական իրավունքների սահմանափակումներ ներկայացվող պահանջների համատեքստում, այն է՝ որոշակիության (հոդված 78), համաչափության (հոդված 79) և իրավունքի էության անխախտելիության (հոդված 8) սկզբունքներ:

¹³ Աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը չի համարվում կամավոր աշխատանք, եթե դրանց կատարումը պահանջում է մասնագիտական որակավորում, և դրանց դիմաց աշխատանք կատարողը կամ ծառայությունները մատուցողը այլ դեպքերում սովորաբար ստանում է հատուցում:

6. Ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկելու հնարավորություն է տրվել դիտորդական առաքելություն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությանը, եթե վերջինս գտնում է, որ խախտվել են Սահմանադրության 7-րդ հոդվածով սահմանված ընտրական իրավունքի սկզբունքները կամ դիտորդի աշխատանքի խոչընդոտման պատճառով խախտվել է դիտորդական առաքելության իրավունքը (Ընտրական օրենսգրքի նախագիծ, հոդված 34, մաս 1):
7. Նախատեսվում է, որ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 11.00-ին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով իրականացված վիճակահանությամբ պատահականության սկզբունքով ընտրում է իրենց ընտրական տարածքում գտնվող երկու ընտրական տեղամաս, որոնցում գրանցված քվեարկության արդյունքները պետք է վերահաշվարկվեն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից (Ընտրական օրենսգրքի նախագիծ, հոդված 36, մաս 2):
8. Սահմանվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի լիազորությունները համաճարակի ժամանակահատվածում ընտրություններ և հանրաքվե նախապատրաստելիս և անցկացնելիս (Ընտրական օրենսգրքի նախագիծ, հոդված 38):
9. Ազգային ժողովի ընտրություններին մասնակցելու մասին կուսակցության (կուսակցությունների դաշինքի) Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվող դիմումին կից՝ ի թիվս այլնի ներկայացվում է նաև կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական ծրագիրը (Ընտրական օրենսգրքի նախագիծ, հոդված 63, մաս 5):
10. Ավելացվել են նախընտրական քարոզարշավի ընթացքում հանրային ռադիոյով և հանրային հեռուստատեսությամբ տրամադրվող անվճար եթերաժամերը: Հանրային հեռուստատեսության եթերաժամից անվճար օգտվելու ժամանակահատվածը սահմանվել է ոչ ավելի, քան 90 րոպե (գործող 60 րոպեի փոխարեն), իսկ հանրային ռադիոյի եթերաժամից անվճար օգտվելու ժամանակահատվածը սահմանվել է ոչ ավելի, քան 180 րոպե (գործող 120 րոպեի փոխարեն) (Ընտրական օրենսգրքի նախագիծ, հոդված 71, մաս 1):
11. Նախատեսվել են կարգավորումներ զորամասերում և զինվորական հաստատություններում նախընտրական քարոզչական նյութերի հասանելիության համար (Ընտրական օրենսգրքի նախագիծ, հոդված 72):

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**